



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Բ. — ՇՐՋԱՆ Ի.

1887

ՏԱՐԻ Ի. ՓԵՏՐՎԱՐ 28.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔԱՐՈՋ ՄԱՀՈՒԱՆ ՎԵՐԱՅ:

ԵՐԿՐՈՐԴ ԿԷՏ.

(Շ-բ-ն-ի. Ա-բ-ա-ր. Բ. Ա.)

Այդ մասին չկասկածենք, ո՛վ քրիստոնեայք, թէ՛ և մենք առանձնացած ենք աշխարհիս այս հեռաւոր մասն, որ փոփոխութիւնների ու մահուան իշխանութեան տեսարանն է. աւելին ասեմ. թէ՛ և մեզանից անքակ, անրաժան լինի մահն, ու թէ՛ և մեր սրբտի մէջը կրում լինէինք, ինչպէս որ կրում ենք, բայց և այնպէս մեր մարմնոյ այս նիւթի մէջն ու մեր ճանաչմանց ու հասկացողութեան խաւարի միջովն, որ մեր զգացմունքների նախապաշարմունքներիցն է յառաջ գալիս, եթէ որ գիտենանք մեր մէջ մտնել, ինքներս մեզ քննել, մենք այնտեղ կը գտնենք այնպիսի մի բան, որ մեզ զօրաւոր կերպով ցոյց է տալիս իւր երկնային ծագումն ու երկիւղ չունի ապականութիւնից:

Ես նորանցիցը չեմ, որ շատ սիրում են փայլել մարդկային

կեանքի կողմանէ իրանց ունեցած մեծ գիտութիւնովն. բայց և այնպէս՝ ես խոստովանութեամբ եմ, որ չեմ կարող առանց զարմանալու մտիկ տալ այն հրաշալի գիւտերի վերայ, որ արել է գիտութիւնը, բնութեան մէջ թափանցելով. կամ մտիկ տալ այն գեղեցիկ հնարքների վերայ, որ գտել է արհեստը՝ բնութիւնը մեր գործածութեան յարմարացնելու համար: Մարդս գրեթէ փոխել է աշխարհիս կերպարանքը. նա իւր խելքովը կարողացել է սանձել այն կենդանիներին, որ ուժով իրանից գերազանց են. նա իմացել է կրթել նորանց վայրենի բնաւորութիւնն և նորանց ապստամբ, անհնազանդ ազատասիրութիւնը նուաճել: Նա մինչև անգամ յաջողակի ամօքել է անկենդան արարածները. ինչո՞ւ եմ հեռու գնում. երկիրս չի՞ ստիպուել արդեօք՝ մարդուս ձեռքի վաստակովը՝ տալ նորան աւելի յարմարաւոր ու վայելուչ սնունդ. բոյսերը չե՞ն ստիպուել արդեօք իւրեանց վայրենի դառնութիւնը նորա համար փոխելու. մինչև անգամ թոյները՝ նորա սիրոյն համար՝ առողջարար գեղեր չե՞ն դարձել: Աւելորդ կը լինէր ձեզ պատմելու թէ՛ ինչպէս գիտէ նա լաւ բանեցնել տարերքն, այնքան տեսակ հրաշքներից յետոյ, որ անել է տալի ամեն օր նորանց մէջ ամենակատաղիներին, ուղղում եմ ասել, կրակին ու ջրին՝ այս երկու իւր մեծ թշնամիներին, որ բայց և այնպէս միաբանում են մեզ ծառայելու շատ օգտակար և շատ կարեւոր գործերի մէջ: Սորանից աւելի էլ ի՞նչ անէր մարդս. նա բարձրացել է մինչև երկինքը. աւելի ապահով կերպով ճանապարհ մանգալու համար՝ նա աստղերին սորվեցրել է իրան առաջնորդել իւր ճանապարհորդութեանց մէջ. իւր կեանքն՝ աւելի հաւասար կերպով չափելու համար՝ նա արեգակին հարկադրել է հաշիւ տալ, այսպէս ասեմ, իւր ամեն քայլերի համար: Բայց ճարտասանութեանը թողնենք երկար ու ճիշտ կերպով մի մի թուելն այս ու այսպիսի բաներն ու բաւականանա՞նք միայն յիշել աստուածաբանօրէն թէ՛ Աստուած, ստեղծել է մարդուն, ինչպէս ասումէ Սուրբ Գրքի պատգամախօսն, որ լինի տիեզերքի տէրն ու թէև այսպիսի իւր ազնիւ զիրքիցը փոխուեց նա իւր յանցանքովը, բայց և այնպէս Ստեղծողը թողել է նորա մէջ մի բնազդումն, որ պառի, գտնի բնութեան բոլոր տարածութեան մէջ, ինչ որ իրան պակասումէ: Սորա համար է, եթէ կհամարձակուիմ ասել, որ նա փորումէ համարձակ ամեն տեղ, ինչպէս իւր կալուածքի մէջ. և

աշխարհքիս ոչ մի մասումը տեղ չենք գտնիլ, ուր որ նա պոյց տաւած չլինի իւր ճարտարամտութիւնն ու իւր ձեռքի՝ աշխատութիւնն:

Այժմ մտածեցէք, տեա՛րք իմ, ի նշտէ՛ս կարող էր մի տկար ու անզօր արարած, որ՝ իւր մարմնոյ կողմանէ՝ ուրիշ ամենայն արարածների իւր վերայ յարձակումն անելուն է ենթակայ, նորանց վերայ ոյժ բանեցնել, եթէ որ իւր հոգւոյ մէջ չունենար մի աւելի գերազանց ոյժ՝ քան թէ բոլոր տեսանելի բնութիւնը, որ է նորա լինելն Աստուծոյ հոգւոյ մի անմահ փշիւն ու շունչ, նորա կերպարանքի մի ճառագայթը, նորա նմանութեան մի գիծն, ամեն մի մարդ կը խոստովանի, որ այդ անկարելի էր: Եթէ մի երեւելի արհեստաւոր մի հազուագիւտ մեքենայ է շինում, գլուխ բերում, ոչ ոք չի կարող նորան գործ ածել, եթէ որ այդ արհեստաւորն ինքն չսորիւցնի նորան բանեցնելու կերպն: Աստուած ստեղծել է աշխարհքս՝ իբրեւ մի մեծ մեքենայ, որ իւր իմաստութիւնը միայն կարող էր հնարել ու իւր զօրութիւնը կարող էր շինել: Ա՛յ մարդ, նա քեզ է այս աշխարհում գրել, որ այդ մեքենայից օգտուիս. նա, այսպէս առեմ, բոլոր բնութիւնն, որ է այս աշխարհս՝ քո ձեռքդ է տուել, որ յարմար տեղն ու ժամանակը բանեցնես. մինչեւ անգամ իրաւունք է տուել քեզ նորան զարգարել ու գեղեցկացնել քո արհեստովդ. պատճառ որ ի՛նչ է արհեստն, եթէ ոչ բնութիւնը գեղեցկացնել: Նու կարող ես աւելացնել մի քանի գոյներ՝ որ այդ զարմանալի սրտները զարգարես. բայց ի՛նչպէս կարող էիր դու՝ մինչեւ անգամ շատ քիչ շարժել այդպիսի մի դժուարաշարժ ու միանգամայն այդպիսի մի ճարտարարուեստ մեքենայ. կամ ի՛նչ կերպով կարող էիր դու մինչեւ անգամ մի յարմար գիծ քաշել այդ երեւելի նկարի վերայ, եթէ որ իսկ քո մէջդ ու քո գոյութեան մի մասում չը լինէր մի արհեստ, որ յառաջ է եկել այն առաջին արհեստից, եթէ որ քո մէջդ չլինէին արգասաւոր գաղափարներ, որ հանուած առնուած են այն սկզբնական գաղափարներից, չերկարացնեմ խօսքս, եթէ որ քո գոյութեանդ մի մասում չլինէր նմանութիւն, մի հասումն, մի մասն աշխարհս ստեղծող այն ճարտարապետի: Եթէ որ բանն այսպէս է, քրիստոնեայք, ո՛վ չէ կարող հասկանալ որ, եթէ բոլոր բնութիւնն էլ միաբանուէր մարդուս գէմ, չէր կարող հանգցնել այդպիսի մի գեղեցիկ ճառագայթն, այդ մեր գոյութեան մասն, որ,

իրան օգնող ու պաշտպանող աստուածային զօրութեան՝ այդպիսի մի ազնիւ տիպն ու նմանութիւնն ունի, և թէ՛ այսպէս մեր հագին, որ շատ բարձր է աշխարհիցս ու իրան բաղկացնող ամեն առաքինութիւններէից, ոչ մի բանից երկիւղ չունի՝ բացի իւր սանդձողից:

Եւ այց շարունակենք, ո՞վ քրիստոնեայք, այդպիսի մի օգտակար խորհրդածութիւնն Աստուծոյ պատկերը մեր մէջը լինելու մասին, և տեսնենք թէ՛ ի՞նչ կերպով այդ սիրուած արարածն, որոյ համար սահմանուած էր, որ միւս բոլոր արարածները գործածի, տեսնենք, ասուած, թէ իւր անելու բանի մէջ ինքն իրան ինչ կարգ ու կանոններ է դնում, որով պէտքէ գնայ: Աւելիդ ճանապարհից դուրս գալն, որ մենք ունինք, խոստովանուած, որ այս է մեր թոյլ կողմը, և սակայն առանց զարմանքի չեմ կարող նկատել բարքի անփոփոխելի կանոններն, որ մարդուս բանականութիւնն գրել է: Ի՞նչ ասեմ, այս մեր հոգին, — զարմացած եմ մնացել, — քր ընկղմուած է մեր մարմնոյ մէջ, որ նորա ամենայն կրքերի հետ, այսպէս ասեմ, պսակվումէ այնպիսի սիրով, որ հալվում, մաշվումէ, քր յուսահատվումէ որ ինքն՝ այլ ևս իրանը չէ, երբ որ ցաւ է քաշում, այս մեր հոգին, ասում եմ, ո՞ր լուսի մէջն է տեսել, որ լուսնով է լուսաւորուել, որ հասկանումէ ու գիտէ, թէ իւր երջանկութիւնը, բայց և այնպէս ջոկ է և ուրիշ տեղ է, որ երբեմն՝ իւր ընդգէմ լինելն իւր մարմնոյ բնութեանը՝ համարձակ ասումէ՝ «Ինձ համար մեռնելը շահ է», թէև բոլոր իւր զգացմունքները, բոլոր իւր կրքերը ու գրեթէ բոլոր բնութիւնը հակառակն են գոչում, կամ ի՞նչպէս կարող է՝ մարմնոյ և բնութեան դէմ գնալով, ասել երբեմն՝ «ես ուրախանում եմ իմ տրամութեանս մէջ»: Մի թէ, ո՞վ քրիստոնեայք, պէտք չէ, որ նա իւր ներքը գտած լինի մի ընտիր գեղեցկութիւն այն բանի մէջ, որ ասվումէ պարտականութիւն, որ կարողանայ դրականապէս հաւատացնել թէ՛ նա պիտի անձնատուր լինի առանց երկիւղի, թէ պէտքէ ինքն իրան ենթարկի՝ մինչև անգամ ուրախութեամբ՝ մեծամեծ չարչարանքների, անհաւատալի տրամութիւնների, ու մի անկասկած մահուան՝ բարեկամաց համար, հայրենեաց համար, թագաւորի համար, եկեղեցւոյ համար, և մի տեսակ հրաշք չէ՞ արդեօք, որ այս հաստատ սկզբունքներն՝ արիատրամութեան, ուղղամտութեան, արդարասիրտութեան՝ երբէք կա-

բող չեն նորա սրտից դուրս գալ, կամ ջնջուել, չեմ ասում ժամանակից, այլ այդ սկզբունքները հակառակ կերպով գործադրելուց, որ՝ մարդկային ազգի երջանկութեան համար՝ շատ աւելի սակաւ մարդիկ կան, որոնք որ բոլորովին արհամարհում են ու բանի տեղ չեն դնում այս անյողգողդ սկզբունքները, քան թէ այնպիսին, որոնք որ այդ բարոյական սկզբունքների հակառակ կեանք վարելն՝ բանականապէս ու քրիստոնէաբար ապրել չեն համարում:

Անկասկած կայ մեր մէջը մի աստուածային լոյս. «Քո կերպարանքի մի ճառագայթն, ո՛վ Տէր, տալուորուած է մեր հոգւոյ մէջ», «Քո երեսիդ լոյսն, ո՛վ Տէր, տալուորուած է մեր վերայ, Թաւադ տեղ է, որ մենք գտնում ենք՝ իբրեւ լուսոյ մի գնդի մէջ՝ մի մշտական քաղցրութիւն, մի յարատեւ ուրախութիւն ազնւութեան ու առաքինութեան մէջ. այստեղ է այն սկզբնական բանականութիւնն, որ իրան ցոյց է տալի մեզ իւր հարազատ պատկերովն. այստեղ է իսկական ճշմարտութիւնն, որ մեզ հետ խօսում է, և որ պէտք է մեզ լաւ հասկացնի թէ՛ կայ մի բան մեր մէջը, որ չէ մեռնում, ինչու որ Աստուած մեզ ընդունակ է արել գտնելու երջանկութիւնը մինչեւ անգամ մահուան մէջ:

Այս ամենն, ինչ որ մինչեւ ցայժմ ասացի, դեռ էլի շատ բան չէ, ո՛վ քրիստոնեայք, բայց Թաւա՛ աւելի մի զարմանալի գիծ այս աստուածային նմանութեանն: Աստուած ինքն իրան ճանաչում է. նորա կեանքն՝ իրան ճանաչելն է. և որովհետեւ մարդս նորա պատկերն է, կամենում է, որ նա էլ իրան ճանաչի: Յաւիտենական, անչափ, անվախճան, ամեն նիւթիցն ազատ, անսահման, ամեն անկատարութիւնիցը հեռու մի Էակ է Աստուած, ո՛վ քրիստոնեայք, և այս ի՞նչ հրաշք է որ մենք ևս, որ զգում ենք միայն սահմանաւորը, տեսնում ենք միայն փոփոխականն, ո՞ր տեղիցն ենք կարողացել իմանալ թէ՛ կայ յաւիտենական Էակն, կամ որ տեղիցն ենք մտածել այդ Էութեան՝ անվախճան լինելուն վերայ:

«Ո՛վ յաւիտենական, ո՛վ անվախճան Էութիւն, ասում է սուրբն Օգոստինոս, միայն մեր զգացմունքները չկասկածեն, ո՞ր տեղիցն ես մտել դու մեր հոգիների մէջ: Բայց եթէ մենք բոլորովին մարմին ենք և բոլորովին նիւթ, ի՞նչպէս կարող ենք հասկանալ թէ՛ ի՞նչ է մի անօտր ու պարզ հոգի և ինչպէս կարողացել ենք գտնել, հարել այդ անունն:

Նս գիտեմ որ այստեղ կարելի է ասել իրաւ ամբ թէ՛ երբ որ

խօսում ենք այդ հոգիների վերայ այնքան չենք հասկանում մեր
խօսածն. ու մեր ակար երեւակայութիւնը չկարողանալով ըմ-
բռնել այդպիսի մի պարզ, մի նուրբ գաղափար, նորան ընծայում է
միշտ մի փոքր մարմին՝ իբրեւ հանգերձ: Բայց իւր վերջին ջանքն
անելուց յետոյ, որ այդ հոգիներն աւելի նուրբ ու պարզ կերպով
հասկանայ, կամ ցոյց տայ, չէք զգում մի և նոյն ժամանակն,
որ մեր հոգւոյ խորքիցը դուրս է գալի մի երկնային լոյս, որ ցըր-
վում է բոլոր մեր այս ցնորքներն, որչափ էլ բարակ, որչափ էլ
նուրբ կերպով կարողացած լինէինք նոցա երեւակայել: Աթէ որ
էլ աւելի է սիրտ առնում այդ երկնային լուսից՝ ու հարցնում
նորան թէ՛ ի՞նչ է ինքն, մի ձայն բարձրանում է հոգւոյդ միջից,
որ, կարծես, ասում է քեզ թէ՛ ես չեմ իմանում՝ ինչ եմ, բայց
և այդպէս էլ չէ, ինչպէս որ դու ես ուղում հասկանալ: Այս հո-
գին որպիսի գորութիւն, որպիսի ոյժ, որպիսի գաղանի առաքի-
նութիւն է զգում իւր մէջն՝ ինքն իրան ուղղելու ինքն իրան
յանգիմանելու և մերժել համարձակելու ամեն բան, ինչ որ նա
մտածում է: Ա՞յ չէ տեսնում, որ մի ծածուկ բերումն, մի հակա-
միտութիւն կայ նորա մէջն, որ դեռ ևս իւր բոլոր ուժովն չէ
գործում, և որն որ, թէ և սեղմուած է, թէ և իւր տղաա-
շարժողութիւնն չունի, բայց լաւ ցոյց է տալի մի տեսակ ուժով,
որ նա բոլորովին կապուած չէ նիւթի հետ և թէ նա կապուած է
իւր գլխովը մի աւելի քարձր սկզբունքի:

Իրան է, ո՞վ քրիստոնեայք, ես խոստովանում եմ, որ մենք
չենք կարում երկար ժամանակ ունենալ մեր սրտումն այս աղ-
նիւ եռանդն. այս գեղեցիկ գաղափարները շուտով մեր մէջը
նսեմանում են ու մեր հոգին կրկին ընկնում է շուտով նիւ-
թի մէջ: Նիւթն ունի իւր տկարութիւնները, իւր թուլու-
թիւններն, և, ներեցէք ինձ ասել, որովհետեւ չեմ իմանում
ինչպէս ասեմ, ունի նա իւր խելք չհասցնելու բրտութիւններն,
որ, եթէ նա ուրիշ տեղից լուսաւորուած չէ, ինքն իրան գրեթէ
ստիպում է կասկածել այն մասին, թէ ինչ է ինքն: Այս պատճա-
ռաւ աշխարհիս իմաստունները տեսնելով մարդուն՝ մի կողմիցն՝
այնչափ մեծ, ու միւս կողմիցն՝ այնչափ անարգ, չեն իմացել՝ ինչ
մտածեն, կամ ինչ ասեն այդպիսի մի օտարոտի խառնուրդի,
այդպիսի մի օտարոտի բաղադրութեան ու միաւորութեան մասին:
Հարցնո՞ր նախնի ոչ քրիստոնեայ փիլիսոփաներից թէ՛ ինչ է

մարդս, ոմանք նորան աստուած կը շինեն, ոմանք էլ՝ ոչինչ, ոմանք կասեն թէ բնութիւնը նորան սիրումէ իբրեւ մի մայր, և թէ նորա ուրախութիւնն է, ուրիշները կասեն թէ՝ բնութիւնն՝ իբրեւ խորթ մայր՝ նորան աչքից քցում է, նեղացնում ու նորան անումէ մի անպիտան ու դէն քցելու բան, իսկ երրորդ մասն իմաստունների, իրանք էլ չիմանալով, թէ ինչ տան, կամ իրանց գլխիցն ինչ հնարեն այս մեծ խառնուրդի մասին, կոպտասխանին թէ՝ բնութիւնը խաղ է արել, միաւորելով երկու մասեր, որ իրար ամենեւին յարմար չեն ու նմանութիւն չունին և թէ այսպէս, իւր միտեցած հաճոյքը ցոյց տալու համար, նա արտադրել է այս հրէշն, որին մարդ անունն են տալիս:

Դուք լաւ հասկանումէք, տեա՛րք իմ, որ՝ ոչ մէկ տեսակը փլիճափառների և ոչ միւսները նպատակին չեն մօտեցել, նպատակը չեն գտել և միայն հաւատն է, որ կարող է լացաւորել այդպիսի մի մեծ հանելուկ: Դուք սխալվում էք, ո՛վ աշխարհիս փիլիսոփաներ, մարդս բնութեան ուրախութիւնը չէ, որովհետեւ բնութիւնն այլ և այլ կերպով նորան վիրաւորում է, կոպիտ և անարգ կերպով վարուելովն, մարդս չի էլ կարող նորա համար մի անպիտան ու դէն քցելու բան լինել, որովհետեւ նորա մէջը կայ այնպիսի մի բան, որ հէնց իրանից՝ բնութիւնիցն էլ աւելի արժէք ունի, ես խօսումեմ զգալի աշխարհի վերայ: Ի՞նչ տեղիցն է ուրեմն այս օտարոտի անհամեմատութիւնը: Պէտք է արդեօք, ո՛վ քրիստոնեայք, տեսմ' ձեզ և այս շինուածքի փուլ եկող պատերն՝ իրանց հոյակապ հիմերովն արդեօք բաւական բարձր ձայնով չե՞ն ասում թէ՝ շինուածքը դեռ ևս ամբողջ և անվնաս չէ: Նկատեցէ՛ք այս շինուածքը, դուք նորա մէջ կը տեսնէք Աստուածային ձեռքի նշանները, բայց շինուածքի մէջ եղած աւելին՝ ու պակասը ձեզ շուտով նկատել կը տայ թէ՛ մեզքը մէջը խառնել է իրանը: Ա՛յ Սատուած, այս ի՞նչպիսի խառնուրդ է: Ես էլ դժուար եմ ինքս ինձ ճանաչում, քիչ է մնում, որ գոչեմ Երեմիա մարգարէի հետ՝ ահա՛ Կաղա՛, որ Բաբելոնի Կաղա՛ն է և Բաբելոն՝ աղա՛ծա՛ն: Այս Երուսաղէմն է արդեօք, այն քաղաքն է արդեօք, այդ տաճա՛րն է արդեօք, բոլոր երկրիս փառք ու պարծանքն և ուրախութիւնն: Ես էլ ասումեմ, արդեօք մա՛րդն է այս, որ ստեղծուած է Աստուծոյ պատկերովն, որ նորա իմաստութեան հրաշակիքն է և նորա ձեռքի ճարտար գործն:

Այն, այդ մասին մի կասկածիք, այդ նա է: Ուրեմն ո՞ր տեղիցն է այս անկանոնութիւնն ու ինչո՞ւ համար եմ տեսնում ես այս մասերն, որ անշափ վատ կերպով են յարմարւում իրար: — Պատճառն այն է, որ մարդս կամեցաւ իւր կերպովը շինել շէնք՝ իւր ստեղծողի շինածի վերայ, ու յատակագծիցը շեղուեցաւ: այսպէս առաջին նկարի կանոնաւորութեանը դէմ միաւորուած գտնուեցան յանկարծ՝ անմահն ու ապականացուն: Հոգեւորն ու մտեղին, մէկ խօսքով՝ հրեշտակն ու անբան անասունն: Ահա հանելուկի միտքն, ահա ամենայն դժուարութիւնների լուծուիլն ու վերցուիլը: Հաւատը մեզ կրկին մեզ պարգևեց, և մեր ամօթալի թուլութիւններն էլ չեն կարող թաղցնել մեր բնական արժանաւորութիւնը:

Բայց աւանդ, ի՞նչ օգուտ մեզ այդ արժանաւորութիւնից: Թէ և մեր աւերակները դեռ ևս ցոյց են տալիս իրանց մեծ ու երևելի շինա-թիւն լինելը, բայց քիչ վնասուած չենք տակի կողմից. մեր առաջուան ունեցած անմահութիւնը մեզ համար միայն աւելի անստանելի է անում մահուան բնութիւնն, և թէ և մեր հոգիները նորա ձեռքը չեն ընկնում, բայց, որ մեզքը նորանց խեղճացնում է, պարծենալու մի տեղ չունին այդպիսի մի դժուարակիր յաւիտենական կեանք ունենալով: Ի՞նչ ասենք, ո՞վ քրիստոնեայք, ի՞նչ պատասխան տանք այդպիսի ծանր կերպով արած մի կարեւոր գանգատի: Մեր Փրկիչը դորա պատասխանը կը տայ սուրբ Աւետարանի մէջ: Նա եկաւ տեսնելու վախճանուած Ղազարին, նա եկաւ տեսութեան մարդկային բնութեան, որ հեծում է մահուան իշխանութեան տակն, ախ, այս այցելութիւնն առանց պատճառի չէ. ինքն ճարտարապետն է Սա, որ անձամբ գալիս է իմանալու, թէ ի՞նչ պակասութիւն ունի իւր շինուածին, որովհետեւ գիտաւորութիւն ունի նորոգել նորան իւր առաջուան՝ բուն օրինակին նման, այն պատկերին համեմատ, որ ինքն ստեղծեց նորան:

Ո՞վ մեզքերով լի հոգի, դու զուր տեղը չէ, որ վախենում ես անմահութիւնից, որ քո մահդ յաւիտենական կանի: Բայց ահա Յիսուսի Քրիստոսի անձի մէջ յարութիւն և կեանք, ով որ նորան հաւատում է, չի մեռնիլ, ով որ հաւատում է Նորան, արդէն կենդանի է մի հոգեւոր ու ներքին կեանքով, ասլրելով շնորհաց կեանքով, որ դէպի իրան է քաշում, ձգում վառայ կեանք:

քը. բայց սակայն մարմինը միշտ էնթալայ է մահուան: Այժմ հոգին մխիթարուի. եթէ այս աստուածային ճարտարապետն, որ ձեռնամուխ է եղել քեզ նորոգելու, թողնում է, որ փուլ գայ ու կտոր կտոր ցած ընկնի քո մարմնոյդ այս հնացած շէնքն, այն մտքով է, որ ուզում է կրկին աւելի լաւ փիճակի մէջ քեզ յետաւալ. նորա համար է, որ նա ուզում է նորան նորից շինել աւելի լաւ կերպով ու կարգով. մի ժամանակ կը մանի քո մարմնոյդ շինուածը մահուան իշխանութեան տակը, բայց ոչ մի բան չի թողնիլ նորա ձեռքումը, բայց այն մասից, որ մահկանացու է, որ հողիցն է ու հող պիտի դառնայ:

Զէք համոզվում, որ մենք մեր մեռնելու և եղծանութեւնով երայ պիտի մտիկ տանք՝ բժշկականութեան դատողութիւններին համեմատ՝ իբրև բնական մի բանի վերայ, որ պիտի լինի մեր մահից յետոյ, այսինքն այն, որ մենք, մեր մեռնելուց յետոյ, ուրիշ բան պէտք է դառնանք, մեր դիակից ուրիշ բան պիտի գոյանայ և ուրիշ բաների հետ պիտի խառնուի մեր աւերուող, ու փշայող մարմինն: Աւելի պէտք է բարձրացնենք մեր սիրան ու հոգին՝ ու հաւատանք՝ քրիստոնէական ուսման սկզբանցը համեմատ՝ թէ այն, ինչ որ մեր մարմինը հասցնում է անպատճառ փշանալու, քար ու քանդ լինելու փիճակին՝ մի փուլ գալու շէնքի նման, այդ նոյն մեր մարմնոյ հրապուրուիլն է դէպի չարն, մեր մարմնոյ, որ վատ ցանկութիւնների մի աղբիւր է, ու մեղքի մարմին է, ինչպէս ասում է սուրբ Առաքեալն Պաւլոս: Այդպիսի մարմինը պէտք է եղծուի, փշանայ, մինչև անգամ ընտրեալներին էլ, ինչու որ այդ մեղքի մարմնոյ փիճակին մէջ արժանի չէ նորից միանալու մի երջանիկ հոգւոյ հետ, ոչ էլ մտնել Աստուծոյ արքայութիւնը. «մարմինն ու արիւնը չեն կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել»: Աւրեմն պէտք է փոխի իւր առաջին կերպարանքն, որ նորոգուի, ու կորցնի բոլորովին իւր առաջուան գոյութիւնն, որ Աստուածանից մի ուրիշ գոյութիւն ու կերպարանք ստանայ: Ինչպէս որ մի հին՝ անկանոն շինուածք զանց են անում նորոգելու, որ նորից շինեն՝ ճարտարապետութեան մի աւելի լաւ կանոնով ու կարգով, այսպէս էլ այս մարմինն, որ կարգից, կանոնից դուրս է եկել մեղքով ու ցանկութիւնով, Աստուած թողնում է փուլ գայ, որ նորից շինի իւր իմացած ձևովն ու կերպով՝ և իւր արարչութեան առաջուան յատակագծովն:

Նա պէտք է փոշի դառնայ, որովհետեւ ծառայել է մեղքի:

Ձեռ տեսնում՝ ինչպէս աստուածայինն Յիսուս բաց է անել տալի գերեզմանն. այս թագաւորն ինքն է, որ բաց է անել տալի բանտն, որ՝ մէջը բռնուած ողորմելիքը՝ դուրս գան: Մեռած մարմիններն, որ թաղուած են երկրի մէջ, մի օր կը լսեն Նորա խօսքըն ու յարութիւն կառնեն Ղազարոսի նման. նոքա յարութիւն կառնեն Ղազարոսից աւելի լաւ, որովհետեւ նոքա յարութիւն կառնեն՝ էլ չմեռնելու համար, ու մահն, ասումէ սուրբ Հոգին, կընկղմուի անդունդքի մէջ ու մահ էլ չի լինիլ:

Ուրեմն ինչո՞ւ ես վախենում, ո՞վ քրիստոնեայ Հոգի, երբ որ մահը քեզ մօտենումէ, Կարելի է, տեսնելով, որ առնդ քանդուեց, դու կասկածումես, որ անտուն, անտեղ կը մնաս. բայց լսիր աստուածային առաքեալին, տես, ինչ է ասում. «մենք գիտենք, մենք գիտենք, ասումէ Նա, ոչ թէ մենք անստոյգ կարծիքներով ենք յորդորվում հաւատով, այլ մենք գիտենք ամենայն վստահութեամբ ու կատարեալ ստուգութեամբ, որ երբ որ այս Հոգեւէն, երկրաւոր տունն, որոյ մէջը բնակվում ենք, քանդուի, մենք մի ուրիշ տուն ունինք, որ մեզ համար պատրաստուած է երկնքում»: «Ո՞վ ողորմած առաջնորդութեան Նորա՞, որ հոգ է տանում մեր կարեացը»: Նա գիտաւորութիւն ունի, ասումէ գեղեցիկ կերպով սուրբ Յովհանն Ասկերերանը. նորոգել այն տունն, որ մեզ տուել է. մինչեւ քանդելն ու փուլ ածելն, որ նորից շինի ու բոլորովին նորացնի՝ հարկաւոր է, որ մենք ուրիշ տեղ փոխուենք. պատճառն որ ի՞նչ պիտի անէինք այդ փոշու, անկարգ ու խառը դրութեան ու նեղութեան մէջ: Ու ինքն առաջարկումէ մեզ իւր պալատը. Նա մեզ տալիս է տան վերին մի մասն, որ մենք հանգստանանք ու սպասենք մինչեւ որ բոլորովին նորոգի մեր հին շէնքն:

Թարգմ. Գաղղիէիէնի Գրիգոր Նպիսկոպոս Աղափիրեան.